

22958

331-1
4-21

1933

05 JAN 2010

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՅԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ



331.1
4-21

8 t f t t u u

1933

ЕМС
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЙ АЗИИ
Российской Академии Наук
СССР

34-ի
Ca 534

331.1

4-21

ՀԿ (Բ) Կ ՅԵՐԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ՍԵՊԱՆԵՐԻ 15-Ի ՎՈՐՈՇՈՒՑ ԱՐՏԱԴՐԱ-
ԿԱՆ-ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱԾԽԱ-
ՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Արձանագրել, վոր արտադրական-ընկե-
րական գատարանները անբավարար են աշ-
խատում (71 արտադրական-ընկերական գա-
տարաններից աշխատում են միայն 30-ը) ար-
տադրական-ընկերական գատարանները թույլ
են պայքարում պրոդուկի, ուշացումների, աշ-
խատանքի գիսցիպլինան խախտողների, կադ-
մալուծողների, գողությունների և չին-
ցաղի մնացորդների զեմ: Կուս. բջիջները,
յուրյաց չեն տալիս և չեն զեկավարում արտա-
դրական-ընկերական գատարանները: Յելնելով
վերոհիշյալից առաջարկել

1. Բոլոր կուս. բջիջի քարտուղարներին՝ 10
որվա ընթացքում բյուրոյի նիստերում լսել
արտադրական-ընկերական գատարանների զե-
կուցումները և կոնկրետ առաջարկներ մշակել
նրանց աշխատանքների ուժեղացման համար:

Հանձնված և արտադրության 26 հունիսի 1933

Սառադրված և առավելու 22 հոկտեմբերի 1933

Գետհրատի Տպարան

Դրամական 8707 (բ), Պատկեր 2078, Տեղաքա՞ն 3000.

բ) Աւագտեմքերի 20—30-ը անցկացնել արտադրական-ընկերական գաստրանների կազմի ստուգում, աղատել արտ. ընկերական գատարանների կազմից արտադրության մեջ իրենց չարդարացնողներին, վոչ հարվածայիններին և նրանց փոխարեն լրացնել առաջարկոր բանվոր հարվածայիններով:

Հարվածայինություն:

2. Աղիտմասբաժին ընկ. Մարզաբյանին՝
ավագ դատավոր ընկ. Գնունուն՝ ՀԱՄԽ-ի հետ
միասին սեպատեմբերի 28-ին հրավիրել արտ.
ընկերական դատարանների կազմի դատախա-
ղական բջիջների, դատական գծով աշխատող-
ների, գործարկում-տեղկոմների և կուս. ադիտ-
սեկառավարների միացյալ խորհրդակցու-
թյուն ու լսել զեկուցում արտ. ընկերական դա-
տարանների անելիքների մասին, զեկուցումը
հանձնարարել ընկ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻն:

բ) Ավագ ժող. գատավոր ընկ. Գնունուն 10-
որդա ընթացքում գատավորներին և քննիչնե-
րին ամբացնել գործարաններին՝ արտադրական
ընկերական գատարաններին ոգնելու համար:

զ) Ընկ. Գնումուն, Մելիք-Սեթյանին կադ-
մակերպել ընկերական գատարանների աշ-
խատողների համար ամեսը մեկ անգամ կոն-
սուլտացիա:

3. ՀԱՄԱԿԱՐԱՎՈՐԻ ԱՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԽԱՆ ՊԵՐԵԳՐԱՆՔՆԵՐ ԹԱԼ ՎՈՐԾԱՐԿԻՈՒՄ-ՄԵՂԻՈՒ-
ՆԵՐԻՆ, ԱՐՏԱՊՐԱԿԻԱՆ ԸՆԿԵՐԱԿԻԱՆ ՎԱՄԱՐՐԱՆ-
ՆԵՐԻՆ ԵԿԱՅԵՐ ԱՌԱՋՎԱՐ ՄԱՍԻՆ:



բ) Ընկ. Հովսեփյանին և Գնուռնուն՝ նոյեմբեր
ամսում կազմակերպել արտադրական ընկ.
դատարանների կազմի և դատախազական
կազմի բջիջների քարտուղարների 15 որյա
դասընթացքներ :

4. Ազիտմաս. բաժին ընկ. Հասրաթյանին
մինչեւ սեպտեմբերի 25-ը կազմել մեկ բողոքութ-
արտադրական ընկ. գատարանների աշխատանք-
ների մասին: Պետ. Հրատ ընկ. Զոփուրյանին՝
հերթից դուրս տպագրել այս բողոքութը:

5. Առաջարկել բոլոր Ագիտասեկտորավարներին, ազիտկողիկախմբներին և ազիտատօրներին կազմակերպել անհատական և խմբակային-ազիտացիա արտադրական ընկերական դատարանների անելիքների և աշխատանքների մասին: Բոլոր բանվոր-ծոռայողներին մասնակից դարձնելու արտադրական-ընկերական դատարանների աշխատանքներին:

6. Ժողջատավոր ընկ. Մելիքսեթյանին՝
մինչև սեպտ. 30-ը կոռակերատիվ և հանրայնաց-
ված ըուլոր շենքերում կազմակերպել արտադ-
րական-ընկ. դատարաններ և դեկավարել նբանց
աշխատանքները:

7. Ժողվատավոր ընկ. Մելիքսեմյանին
Յորվա ընթացքում լուծել արտադրական-ըն-
կերտական գտարանների ստացված գործերը:

Տ. Վարչումը հրապարակել թերթում:
Հ. Կ. (բ) կ. Յերկուսի քարտուղար՝

(Հ. ԹԱՐԱՆԴԱԿԱՆ)

ԱՐՏԵՂՐԱՎԱՆ - ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀՐԱԳԱՆԳԲ
ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՍՐՏԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՍԽՀ ձեռնարկություններում և հիմնարկություններում աշխատանքի կարգապահության խախտումների, արտադրությունը կաղմալուծողների նույնպես և հին կենցաղի մնացորդների (հարբեցողության և այլն) դեմ պայքարի շուրջը բանվորների և ծառայողների լայն մասսայի հասարակական ինքնազործունեյությունը կենտրոնացնելու նպատակով կենտրոնական ֆորձադիր կոմիտեն և ժողովրդական կոմիսարների խորհուրդը վորոշում ե. —

1) Հիսուն հոգուց ավելի բանվորներ և ծառայողներ ունեցող գործարանային ձեռնարկություններում, պետական հասարակական հիմնարկներում կազմակերպել Արտադրական-ընկերական դատարաններ:

2) ՀՍԽՀ կենազործկոմի և Ժողկոմի խորհրդի կողմից 1929 թ. դեկտեմբերի 16-ին հաստատ-

ված «Ընկերական դատարանների մասին» կանոնադրության հիման վրա գործարանային ձեռնարկություններում, պետական և հասարակական հիմնարկներում գործող ընկերական դատարանները վերանվանել Արտադրական-ընկերական դատարաններ և վերակառուցել այս վորոշման համաձայն:

3. Արտադրական-ընկերական դատարանների նպատակն ե՝

ա) Պայքարել արտադրական կարգապահությունը ամրապնդելու, ձեռնարկության և հիմնարկի արտփինալլանները կատարելու համար, ձեռք առնելով նախազդուչական և կարգապահական միջոցներ։ Աշխատանքի կարգապահությունը, ներքին կարգապահական կանոնները խախտողների նաև ձեռնարկության կամ հիմնարկության պատկանող գույքին անխնամ վերաբերվող անձանց նկատամբ։

բ) Պայքարել բանվորների և ծառայողների ունեցած հին կենցաղային մնացորդների դեմ (հարբեցողություն, սրիկայություն, վիրավորանք), վորոնք խախտում են աշխատանքային կարգապահությունն արտադրության մեջ։

4. Արտադրական-ընկերական դատարանները ձեռնարկություններում ընտրվում են հարվածային բանվորներից, իսկ հիմնարկներում՝ հարվածային ծառայողներից։ Ընտրությունները կատարվում են համապատասխան

ձեռնարկության և հիմնարկության բանվորների և ծառայողների ընդհանուր ժողովներում, կամ գործարանային կոնֆերանսներում։ Արտադրական ընկերական դատարանի կազմն ե՝ նախագահ, մեկ կամ յերկու տեղակալ և տառը հոգուց վոչ պակաս անդամներ։

Դատարանի անդամների քանակը սահմանվում է տվյալ ձեռնարկության, հիմնարկության բանվորների և ծառայողների ընդհանուր ժողովի կամ գործարանային կոնֆերենցիայի կողմից։ Արտադրական ընկերական դատարանները ընտրվում են մինչև մեկ տարի ժամանակով։ Գործարանային և տեղական կոմիտեներին իրավունք է վերապահվում բացարք հայտնելու ընտրված դատարանի ամբողջ կազմի կամ նրա առանձին անդամների գեմ։

Նախագահը, նրա տեղակալները և արտադրական ընկերական դատարանի անդամները կարող են ժամանակից շուտ հետ կանչվել ընտրողների կողմից, յեթե նրանք չեն արգարացնում ընտրողների վստահությունը։

5. Արտադրական—ընկերական դատարաններն իրենց վրա դրված ինդիքների համեմատ քննում են հետեւյալ գործերը և արարքները։—

ա) Աշխատանքի կարգապահության խախտումները, այն ե՝ աշխատանքից հաճախակի ուշանալը, գործալքումը, հարբած դրությամբ աշխատանքի գալը և անհարգելի պատճառով մի ձեռնարկությունից մյուսն անցնելը։

բ) Սոցիալիստական գույքին (մեքենաներին, գործիքներին, նյութերին, շենքերին և այլն) սիստեմատիկորեն անխնամ վերաբերմունք ցույց տալը։

գ) Սահմանված նորմայից բարձր խոսանք (օրակ) արտադրելը։

դ) Խոսքով, գրավոր կամ գործողությամբ հասցրած վիրավորանքները (վարկաբեկող սուս տեղեկություններ տարածելը) և առանց մարմնական վնասվածքներ հասցնելը։

ե) Ձեռնարկության կամ հիմնարկության տերիտորիայի վրա բանվորներից և ծառայողներից կատարած գողությունները նաև ձեռնարկության և հիմնարկության պատկանող նյութերի կամ գործիքների գողությունը, յեթե գողացված իրերի արժեքը հիմուն ուռւրուց ավելի չե։

զ) Արեկայության այն դեպքերը, վորոնք յենթակա չեն քրեական հետապնդման կամ կենցաղային բացասական այլ արարքները, վորոնք չեն համապատասխանում կոլեկտիվի պահանջներին։

ե) Հիսուն ուռւրուց վոչ ավելի ստացվածքային վեճերը։

6. Արտադրական-բնկերական դատարանների քննության յենթակա չեն։

ա) Այն գործերը, վորոնք ծագում են ձեռնարկություններում և հիմնարկություններում, ստորադաս և վերադաս պաշտոնատար

անձանց, նաև բանվորների ու վարչատեխնիկան անձնակազմի միջև այն հարաբերությունների շուրջը, վորոնք անմիջականորեն բխում են ձեռնարկության կամ հիմնարկության մեջ, նրանց ունեցած աշխատանքից:

բ) Ալիմենտի (ապրուստի) և աշխատանքային հարցեր: 5-րդ հոդ. ա, բ, գ կետերում նախատեսված նաև ձեռնարկության պատկանող նյութերը և գործիքների գողության վերաբերող (հոդ. 5-րդ «Ե» կետ) գործերը յենթակա յեն արտադրական ընկերական դատարանի քննության այն դեպքում, յերբ ձեռնարկության կամ հիմնարկության վարչությունը ինքն է գործը հանձնում Արտադրական—ընկերական դատարանին. կամ չի առարկում հասարակական կազմակերպության կամ բանվորների ու ծառայողների կողմից հարուցված գործն Արտադրական—ընկերական դատարանում քննելու դեմ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Արտադրական—ընկերական դատարանն իր վարույթի մեջ ընդունելով յերկաթզի վրա աշխատանքի կարգապահության և ներքին կանոնները խախտելու վերաբերյալ ծագող բոլոր գործերը, պարտավոր և նախքան քննության անցնելը, անմիջապես հայտնել յերկաթուղու վարչությանը այդ մասին: Վերջինը փոչ ուշ քան յերեք որվա ընթացքում այս առթիվ դատարանին իր համաձայնությունն ետքիւ:

7. Արտադրական—ընկերական դատարանները 5-րդ հոդ. հիշված գործերը քննում են՝ ա) Յերբ կողմ են հանդիսանում մի ձեռնարկության կամ հիմնարկության բանվորները և ծառայողները, նրանց ընտանիքի անդամները նաև այլ անձինք, վորոնք թեև չեն աշխատում տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության մեջ, բայց բնակվում են գործարանային տերիտորիայի վրա:

բ) Յերբ կողմ են հանդիսանում մի քաղաքի կամ քաղաքամասի տարրեր ձեռնարկությունների կամ հիմնարկությունների բանվորներն ու ծառայողները, վորտեղ կազմակերպված են Արտադրական—ընկերական դատարանները, այդ դեպքում գործերը քննվում են այն ձեռնարկության կամ հիմնարկության Արտադրական—ընկերական դատարաններում, վորտեղ աշխատում ե զանցանք կատարող անձը կամ պատասխանողը:

գ) Յերբ հայցերն ուղղված են առանձին բանվորների ու ծառայողների դեմ ինչպես տվյալ ձեռնարկության ու հիմնարկության բանվորների ու ծառայողների վարչության կամ հասարակական կազմակերպությունների կողմից նույնպես և ուրիշների, վորոնք գտնը-վում են քաղաքամասի կամ քաղաքի տերիտորիայի վրա:

դ) Այն դեպքում, յերբ արտադրական ընկերական դատարանին ընդդատյա զանցանքի

մեջ նկատվում են հանցագործության նշավակ-
ներ, ամբողջ գործը պետք է հանձնվի համա-
պատասխան դատարանին քննության:

9) Արտադրական ընկերական դատարան-
նում գործերը կարող են հարուցվել շահագըր-
դրոված անձանց կամ արհմիութենական և հա-
սարակական կազմակերպությունների թե բա-
նավոր և թե դրավոր դիմումների հիման վրա:

10) Արտադրական ընկերական դատարան-
ներն իրենց աշխատանքներում կաշկանդված
չեն դատավարության ձևական կանոններով,
բացի այն կանոններից, վորոնք հիշված են այս
վորոշման մեջ։ Արտադրական—ընկերական
դատարաններում դատավարությունն ազատ և
ամեն տեսակի դրամական և այլ դանձումնե-
րից։

11) Արտադրական—ընկերական դատարա-
նում գործերը քննվում են դռնբաց նիստում՝
նախադահի կամ նրա տեղակալի և դատարանի
յերկու անդամների կազմով, վորոնք մասնակ-
ցում են նիստին հերթականության կարգով։
Նիստի որերն ու ժամերը Արտադրական—ընկե-
րական դատարանի կողմից վորոշում են այն
հաշվով, վորակեազի դատարանի մասնակցողնե-
րը չկտրվեն արտադրության աշխատանքներից։
Արտադրական—ընկերական դատարանում գոր-
ծերը պետք է քննվեն դիմում ստանալու պա-
հից վոչ ուշ, քան հինգ որվա ընթացքում։ Ար-
տադրական—ընկերական դատարանին տեխնի-

կապես սպասարկում են գործարանային կամ
տեղական կոմիտեների ապարատները։

12) Արտադրական ընկերական դատարանը
պարտավոր է գործը քննությունները ան
համաժողովին, պատասխանողին կամ զանցանք կա-
տարողին։ Ասել նրանց բացատրությունները ան
հարժեշտության դեպքում հարցաքննել վկանե-
րին, կատարել տեղական զննություն և ձեռք
առնել բոլոր այն միջոցները՝ գործն ավելի
լրիվ և բազմակողմանի պարզելու համար։

Յեթե գործին մասնակցող անձինք տեղե-
կություն ստանալով դատարան չեն ներկայա-
նում, գործի քննությունը կարող է կամ հե-
տաձգվել՝ չներկայացող անձինք կանչելու հա-
մար կամ քննել նրանց բացակայությամբ, կամ
թե կարճել։

13) Արտադրական—ընկերական դատարան-
նի վորոշումներն ընդունվում են դատարանի
կազմի ձայների մեծամասնությամբ, շարա-
դըրում են կարծ ու գրավոր ու հրապարակով
հայտարարում գործի մասնակցողներին։

14) Զանցառու անձանց նկատմամբ Արտա-
դրական—ընկերական դատարանները կարող են
կիրառել հետեւյալ ներգործական միջոցները՝
ա) Նախադպուչացում.

բ) Հասարակական պարսականք հրապա-
րակելով կամ չհրապարակելով այն պատի կամ
կենարունական թերթերում։

գ) Տասը ոռություց վոչ ավելի տուգանք հա-
սարակական կազմակերպությունների ոգտին

(Պատջը-ավիաքիմ, «Մանուկների Բարեկամների Ընկերություն» և այլն)։

Գույքի վնասի հատուցման պարտավորություն, յեթե նա չի անցնում հիսուն ոռւբլուց։

հ) Հարց հարուցել վարչության առաջգաղատության աշխատավորության, հեռացնելու մասին։

զ) Հարց հարուցել համապատասխան արհմիության կազմակերպության միջոցով զանցառության վորոշ ժամանակով արհմիությունից հեռացնելու մասին։

ե) Զարամիտ պարապուրդավորներին և չփողներին մատակարարման առաջին խմբից տեղափոխել յերկրորդ խումբ վոչ ավելի, քան յերեք ամիս ժամանակով։

15) Արտադրական—ընկերական դատարանների վորոշումները վերջնական են, յենթակա չեն բողոքարկման և կատարվում են անմիջապես։

16) Տուգանքի և դրամական գանձումների հատուցման վերաբերյալ Արտադրական—ընկերական դատարանների վորոշումները կամովին չկատարելու դեպքում այդ գանձումները կատարվում են ձեռնարկության կամ հիմնարկության միջոցով բանվորի կամ ծառայողի աշխատավարձից ՀՍԽՀ քաղ. դատ. որ. 280 հոդ. նախատեսված կանոնների համաձայն։ Արտադրական—ընկերական դատարաններին

իրավունք ե վերապահվում տուգանք և այլ դրամական գանձումները հետաձգել կամ միքանի նվազով գանձել։

17) Արտադրական—ընկերական դատարանի գործունեյության վրա հսկողությունն իրականացվում ե ժողդատարանի կողմից։ Ժողովրդական դատավորն Արտադրական—ընկերական դատարանում յերեան հանելով այդ դատարանին վոչ ընդդատյա գործ կամ Արտադրական ընկերական դատարանի վորոշման մեջ նկատելով նրա իրավասությունից դուրս դալու դեպքեր կամ ել որենքի եյական խախտում, կասեցնում ե այդ վորոշման կատարումը՝ ընդունելով այն ի քննություն։

18) Արտադրական—ընկերական դատարանի ղեկավարությունը իրագործում է ՀԱՄԽԸ և Գերագույն դատարանը, իսկ տեղերում արհետակցական և արդարադատության մարմինները։

Ի. տ. Կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախագահի՝ Ռ. ԴԱՆՏՈՅԱՆ

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝ Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ

Ի. Տ. Կենտրոնական գործադիր կոմիտեյի քարտուղարի՝ Պ. ՍՏԱՄԲՈԼՅՅԱՆ

Հ Ր Ա Կ Ա Ն Գ

ՀՍԽՀ ԿԵՆՏՊՈՐԾԿԱՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՍԽՈՐՉԻ 1931 թ.
ՀՈՒԼԻՍԻ 26-ի ՀՍԽՀ ՀԻՄՆԱՐԿ-ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐՈՒՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԿԻՐԱ-
ՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ


1. Արտադրական—ընկերական դատարան-ները կարևորագույն գործիք են արտադրության մեջ հիմնարկություններում և կոլեկտիվ տնտեսություններում արտֆինալլանների կատարման համար պրոպագանդ մղելու, դիստիպիկան ամրապնդելու, կազմալուծող տարրերի այլ և հին կենցաղի մնացորդների դեմ պայքարելու համար:

2. Արտադրական—ընկերական դատարան-ները վոչ միայն չեն բացասում միանձնյա զեկավարությունը, այլ ամբողջովին լրացնում են այն:

Արտադրական—ընկերական դատարանները քննության չեն առնում այն գործերը, վորոնք ծագում են ձեռնարկություններում և հիմնարկություններում, ստորագրյալների ու

վերադաս պաշտոնատար անձանց միջև, այլ և բանվորների ու վարչատեխնիկական կազմի միջև այն հարաբերությունների չուրջը, վորոնք անմիջորեն բղխում են տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության մեջ նրանց ունեցած աշխատանքից:

3. Վորպեսզի Արտադրական—ընկերական դատարանի և վարչության աշխատանքի մեջ զուգահեռություն չառաջանա, վարչությունը չպետք է թույլ տա, վոր արտադրական ընկերական դատարաններն ամբողջովին զբաղված լինեն մանր, ցուցադրական բնույթ չունեցող արտադրական խախտումների վերաբերյալ գործերով։ Այլապես Արտադրական—ընկերական դատարանը կդառնա վարչության տեխնիկական ապարատը և միանձնյա զեկավարությանը կզբի, ներքին կարգապահական կանոնները, տույժացուացկը և այլն, պարզորոշ ձևով կիրառելու միջոցով, աշխատանքի դիստիպիկանի և աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար պայքարելու հնարավորությունից։ Մյուս կողմից Արտադրական—ընկերական դատարանները գործար-տեղեկումների կամ պրոֆ. լիազորների ոժանդակությամբ պետք է գտնեն, վորպեսզի վարչությունն իրենց քննության հանձնի արտադրական խախտումների վերաբերյալ այնպիսի գործեր, վորոնց հասարակուկան քննությունը կարող է դատակարգային-դաստիարակչական նշանակություն ունենալ կուեկտիվի մյուս աշխատանքների համար։



4. Գործերի քննությունն Արտադրական—ընկերական գատարաններում՝ պետք է այնքան պարզ և մատչելի լինի, վորապեսզի յուրաքանչյուր բանվոր և ծառայող կարողանա առանց վորեւ դժվարության ակտիվ մասնակցել նրանց աշխատանքներին:

5. Արտադրական—ընկերական գատարանների առջև դրված ինդիքները ճիշտ կատարելու համար անհրաժեշտ է, վոր նրանց բոլոր աշխատանքները կատարվեն հրապարակորեն։ Այս տեսակետից անհրաժեշտ է ամենալայն կերպով տեղեկացնել մասսաներին ինչպես գործերի քննության, նույնպես և գատարանների ընդունած վորոշումների մասին, քանի վորայդ վորոշումները ձեռնարկության և հիմնարկության բանվորների և ծառայողների ու կոլտնտեսականների հասարակական կարծիքի արտահայտությունը պետք է լինեն։

Ուստի արտադրական ընկերական դատարանների աշխատանքին պետք է մասնակից անել բանվորների, ծառայողների կամ կոլտնտեսականների ամբողջ կոլեկտիվը, դատարանի նիստերին պետք է ներկա լինեն և գործերի քննությանը մասնակցեն ըստ հնարավորության մեծ թվով բանվորներ և ծառայողներ, իսկ դատարանի վորոշումների մասին անպայման պետք է իրաղեկ դարձնել բանվորների և ծառայողների ամբողջ մասսային, փակցներով այդ վորոշումների քաղվածքները հատուկ տախտակների

վրա՝ ցեխերում, արհեստանոցներում, ակումբներում և ճաշարաններում, այլ և տպագրելով պատի թերթերում և այլն։

2. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ԸՆԿԵՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՁՍԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Այս դեպքում, յերբ ձեռնարկությունն ունի իր կազմի մեջ այնպիսի ցեխեր, վորոնց մեջ աշխատողների թիվը 100-ի յեւ հասնում կամ ավելի յեւ, ապա այդ ցեխերից յուրաքանչյուրի մեջ կարող են կազմակերպել ինքնուրույն ցեխային Արտադրական—ընկերական դատարաններ։

7. Արտադրական—ընկերական դատարաններն ընտրվում են համապատասխան ձեռնարկության հիմնարկության, կամ ցեխի բանվորների և ծառայողների ժողովներում կամ կոնֆերանսներում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Խնստիտուտներում և ֆաբրիչներում արտադրական դատարանների կազմն ընտրվում է դասախոսների և ուսանողության միացլաւ ընդհանուր ժողովում կամ կոնֆերանսում։

Դատարանի կազմի մեջ կարող են ընտրվել միայն հարվածային բանվորներն ու ծառայողները, կոլտնտեսականները և պրոլետարական հասարակության հետ ամենից շատ կապված հարվածային մասնագետները։

8. Արտադրական—ընկերական դատարանները ընտրվում մեկ տարի ժամանակով։ Ֆար-

բիկա-գործարանային և տեղական կոմիտեներին իրավունք ե տրվում բացարկ հայտնելու ընտրված դատարանի ամբողջ կազմի և նրա առանձին անդամների դեմ։ Արտադրական—ընկերական դատարանի նախագահը, նրա տեղակալները և անդամները կարող են մինչև նրանց ընտրության ժամանակը լրանալն ընտրողների կողմից հետ կանչվել, յեթե չեն արդարացնի ընտրողների վստահությունը։

Յ. ԽՆՁԻՍԻ ԳՈՐԾԵՐ ԵՆ ՔՆՎԱՒՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ

9. Արտադրական—ընկերական դատարանների քննության յենթակա յեն ինչպես արտադրական, նույնպես կենցաղային բնույթ ունեցող գործեր։

Ա. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

10. Արտադրական բնույթ ունեցող գործերն Արտադրական—ընկերական դատարանի քննությանը յենթակա յեն այն դեպքերում միայն, յերբ հիմնարկ ձեռնարկների կամ կոլտնտեսությունների վարչությունն իր նախաձեռնությամբ ե հանձնում ձեռնարկության և հիմնարկության բանվորների ու ծառայողների կամ հասարակական կազմակերպությունների կողմից հարուցված գործն Արտադրական—ընկերական դատարանի քննությանը կամ չ առարկում, վոր գործն այդ դատարանը քննի։ Վարչություն ասելով պետք ե հասկանալ նրա

այն ներկայացուցիչները, վորոնք իրավունք ունեն աշխատանքի դիսցիպլինը խախտողներին տույժի յենթարկելու։

11. Արտադրական բնույթ ունեցող գործերը պետք ե քննության առնել այն ձեռնարկության Արտադրական—ընկերական դատարանում, վորտեղ զանցառում աշխատում ե՝ բացառությամբ այն դեպքերի, յերբ ավելի նպատակահարմար ե գործը քննել այն ձեռնարկության կամ հիմնարկության մեջ, վորտեղ արարքն ե կատարվել։

12. Արտադրական խախտումները, յեթե վարչության համապատասխան ներկայացուցիչները համաձայն են, քննվում են Արտադրական—ընկերական դատարանում, անկախ արարքները գործող անձանց պաշտոնական դիրքից (բանվորներ, վարպետներ, ցեխների և բաժինների վարիչներ, նրանց տեղակալներ և այլն)։

Բ. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

13. Արտադրական—ընկերական դատարաններում քննվում էն կենցաղային բնույթ ունեցող հետեւյալ գործերը։

ա) Առաքով, գրավոր կամ գործողությամբ վիրավորանք հասցնելը։

բ) Զրապարտիչ լուրեր տարածելը։

գ) Առանց մարմնական վնաս հասցնելու ձեճը։

գ) Արտադրությունից դուրս խուլիգանություն գործելու և հասարակական կոլեկտիվի պահանջները խախտող այլ արարքների մասին, վորոնք տեղի յեն ունեցել կենցաղային պայմաններում:

ե) 50 ռուբլուց վոչ ավելի գումարի չափով գողությունների մասին, վորոնք կատարվել են ձեռնարկության տերիտորիայի վրա՝ բանվորներից ու ծառայողներից նաև հիմնարկության ձեռնարկության կամ կոլխոզին պատկանող նյութերի կամ գործիքների գողությունը, յեթե նրանց արժեքը 50 ռուբլուց ավելի չէ:

զ) 50 ռուբլուց վոչ ավելի ստացվածքային վեճերի մասին.

14. Ստացվածքային և դրամական վեճերի վերաբերյալ հարցերը կարող են քննվել տվյալ հիմնարկության, ձեռնարկության կամ կոլտնտեսության Արտադրական—ընկերական դատարանում հետեւյալ դեպքերում՝

ա) Յերբ վիճող յերկու կողմերն ել այդ ձեռնարկության, հիմնարկության, կամ կոլտնտեսության մեջ են աշխատում.

բ) Յերբ ձեռնարկության, հիմնարկության կամ կոլտնտեսության մեջ աշխատողներից մեկի դեմ հարց ե հարուցված, ինչպես նույն այդ ձեռնարկության, հիմնարկության կամ կոլտնտեսության և նույնպես քաղաքում կամ շրջանում գտնվող այդ ձեռնարկության, հիմնարկության կամ կոլտնտեսության վարչու-

թյան կամ հասարակական կազմակերպության կողմից:

15. Մնացած բոլոր կենցաղային գործերը յենթակա յեն Արտադրական—ընկերական դատարանի քննության, ինչպես այն դեպքում, յերբ գործին մասնակցող յերկու կողմերն ել (հայցավոր և պատասխանող, տուժող և զանցառուն) միևնույն ձեռնարկության կամ հիմնարկության բանվորներ ու ծառայողներ են կամ նույն կոլտնտեսության անդամներ են, նույնպես և այն դեպքում, յերբ այդ անձինք տարբեր ձեռնարկության, հիմնարկության կամ կոլտնտեսության մեջ են աշխատում, յեթե միայն ձեռնարկությունը, հիմնարկությունը, կամ կոլտնտեսությունը միևնույն քաղաքի, շրջանի կամ գյուղի տերիտորիայի վրա յետնվում:

Յեթե գործը ծագել է տարբեր ձեռնարկություններում և հիմնարկություններում կամ կոլտնտեսություններում աշխատողների մեջ, ապա պետք է քննության առնել այն ձեռնարկության, հիմնարկության կամ կոլտնտեսության Արտադրական—ընկերական դատարանում, վորտեղ աշխատում և պատասխանողը կամ զանցառուն:

16. Տվյալ ձեռնարկության, հիմնարկության կամ կոլտնտեսության Արտադրական—ընկերական դատարանը կարող է քննել և այդ ձեռնարկության, հիմնարկության կամ կոլ-

տնտեսության չաշխատողների վերաբերյալ
կենցաղային գործեր՝ այն դեպքում միայն,
յերբ գործին մասնակցող յերկու կողմերն ել՝

ա) Այդ ձեռնարկության կամ հիմնարկու-
թյան բանվորների և ծառայողների ընտանիք-
ների անդամներն են.

բ) Ֆարբիլա—գործարանային հիմնար-
կության տերիտորիայի վրա բնակվող աշխա-
տողներն են.

4. Խօֆիսի գործեր ՅԵՆՔԱԿԱ ԶԵՆՔԱԿԱ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ԸՆԿԵՐԱԿԱՆ
ԳԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ

17. Արտադրական—ընկերական դատա-
րանների քննության յենթակա չեն՝

ա) Ապրուստի միջոցին վերաբերյալ գոր-
ծեր:

բ) Աշխատանքային հայցեր, ինչպես աշ-
խատողների՝ ձեռնարկության կամ հիմնար-
կության դեմ (աշխատավարձի, հեռացման,
արձակուրդի մասին և այլն) նույնպես և ձեռ-
նարկության կամ հիմնարկության հայցեր աշ-
խատողների դեմ (ավելորդ վճարված աշխա-
տավարձը պահանջելու գործավարձների, խո-
տանի (բրակ), գործիքների մնասման կամ կո-
րուստի միջոցով հասցրած վնասների հատուց-
ման մասին և այլն) ինչպես նաև տնային ծա-
ռայողների (մանկապահուհի և այլն) կողմից
հարուցված հայցեր՝ աշխատողների դեմ:

ԾԱՆՈԹՈՒՅՑՈՒՆ. — Աշխատանքի դիսրիպ-
տուայի խախտմամբ պատճառած 50 առքլուց վոչ

ավելի բարձր գումարի չափով մասս հատուցելու
վերաբերյալ, վարչության առաջտրած պահան-
ջը կարելի է արտադրական—ընկերական դա-
տարանում քննության առնել այն դեպքում,
յերբ ձեռնարկության կամ հիմնարկության վար-
չությունն իր այդ պահանջի հետ միաժամանակ
հանձնում ե Արտադրական—ընկերական դատա-
րանին նաև աշխատանքի դժուցի պլինան խախ-
տելու մասին գործը, ինչըն իր կողմից վոչ դիս-
րիպտի չենթարկելով:

գ) Այն գործերը, վորոնք կարող են ծագել
ստորագրյալների և վերադաս պաշտոնատար
անձնց կամ բանվորների ու վարչա—տեխնի-
կական կազմի միջև՝ ընդհանուր աշխատանքի
ընթացքում առաջացած անմիջական փոխհա-
րաբերությունների հողի վրա, յենթակա չեն
Արտադրական—ընկերական դատարանի քըն-
նության, որինակ՝ գործվարձ բանվորի բողո-
քը վարպետի դեմ՝ անտեղի նկատողություն-
ների կամ սիստեմատիկորեն «անձեռնուու աշ-
խատանք» տալու վերաբերյալ վեճեր, ավելի
բարձր վորակ պահանջող աշխատանքի փոխա-
դրելը մերժելու առթիվ բանվորների բրիգադի
հայտաբարությունն այն մասին, վոր վարչու-
թյունն իրեն վատորակ նյութեր ու գործիքներ
և մատակարարում և այլն: Նման բոլոր գործե-
րը պետք ե ուղարկել վոչ թե Արտադրական—
ընկերական դատարան, այլ ցեխային կոմիտե-
յին կամ գործար-տեղկոմին, յեթե աշխատող-

ների վարչական գծով տված դիմումը արդյունք չի տվել:

5. ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ

18. Արտադրական—ընկերական դատարաններն իրավունք ունեն գործադրելու կանոնադրության 14-րդ հոդվածով նախատեսնված միջոցները:

ԾԱՆՐԹՈՒԹՅՈՒՆ.—Արտադրական ընկերական դատարաններն իրավունք ունեն գործադրելու ներգործության միջոցներից 2-ը միաժամանակ, որինակ՝ նախազգուշացում կամ հաստրակական պարսավանք և տուգանք: Բացի այդ յեթե դատարանն անհրաժեշտ է համարում, հատկապես նշում ե, վոր իր փորչումը պետք ե հրատարակել ցեխային կամ համագործարարավին մամուլում, կամ թե առաջարկել վարչությանը կամ պրոֆ. կազմակերպությանը, հիշատակել Արտադրական փաստաթղթերի մեջ Արտադրական—ընկերական դատարանի վորոշած ներգործության միջոցի մասին:

6. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ—ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ

19. Գործ հարուցելու մասին դիմումներն Արտադրական—ընկերական դատարաններին կարող են տրվել ինչպես բանավոր, նույնպես և գրավոր ձեռով, ինչպես և շահագրգուված անձանց, նույնպես և պրոֆմիութենական և հաստրակական կազմակերպությունների կողմից:

Բանվորյակերի դիմումը հակիրճ շաբադըում է Արտադրական—ընկերական դատարանի նախագահը կամ անդամը և ստորագրվում դիմողների կողմից:

20. Բոլոր դիմումները պետք ե քննության առնել վոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում՝ դիմումը ստանալու որվանից հաշված:

21. Գործերը քննության են առնվում Արտադրական—ընկերական դատարանների դընորաց նիստերում, աշխատանքի ժամերից դուրս և բանվորներին, ծառայողներին ու կոլտնտեսականներին պիտի նախորոք հայտարարվի Արտադրական—ընկերական դատարանի նիստի օրվա և ժամի մասին:

22. Արտադրական—ընկերական դատարանի ամբողջ կազմը կամ նրա առանձին անդամների դեմ կողմերը կարող են բացարկ հայտնել և պահանջել, վոր նրանք գործի քննությանը չմասնակցեն: Բացարկ կարելի յե հայտնել այն դեպքում, յերբ Արտադրական—ընկերական դատարանի անդամներից մեկն ու մեկը կողմերի հետ առանձին հարաբերության մեջ ե գտնվում, կամ շահագրգուված ե գործի յելքով: Դատարանի անդամների դեմ հայտնված բացարկի հիմնավորված լինելը վորոշում են նույն Արտադրական—ընկերական դատարանի մնացած անդամները, վորոնց դեմ բացարկ չի հայտնված:

Յեթե բացարկի պատճառները հարգելի

յեն համարվում, ապա Արտադրական—ընկերական և տարանները, չհետաձգելով գործը, հրավիրում են նիստին Արտադրական—ընկերական դատարանի մի ուրիշ անդամին:

23. Գործի քննությունը կատարվում են նույն սովորական կարգով, ինչ կարգով վոր գործեր են քննում յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն: Դատարանը գործը քննելիս չի կաշկանդված դատավարական ձևակերպություններով: Գործն ավելի նպատակահարմար ձևով քննության առնելու տեսակետից ցանկալի յեն, վոր դատարանի նախագահը կամ նրա հանձնարարությամբ դատարանի անդամներից մեկը գործի քննության հենց սկզբում հայտարարի, թե ի՞նչ արարք են գործել դատի կանչվածը, կամ դուքքային վեճ լինելու դեպքում ինչումն են հայցի եյությունը: Սրանից հետո խոսք պետք են տալ շահագրգոված կողմերին, հարցաքննել վկաներին, յեթե դրանք կանչված են նույն գործով, հայտնել թե ի՞նչ փաստաթղթեր կան յեթե դրանք նշանակություն ունեն գործի համար են ապա կատարել այն բոլոր գործողությունները, վորոնք անհրաժեշտ են գործը բազմակողմանիորեն պարզելու համար: Վկաներն առանձին սենյակի չեն հեռացվում, ինչպես այլ տեղի յեն ունենում դատարաններում, այլ մասնակցում են գործի քննության և իրավունք ունեն, ինչպես և դա-

տին մասնակցողներից յուրաքանչյուրին հարցեր տալ և արտահայտվել:

24. Արտադրական—ընկերական դատարանի վորոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ, հակիրճ շարադրվում են դրավոր և հայտարարվում գործին մասնակցողներին հրապարակորեն:

25. Այն դեպքերում, յերբ զանցառությոծողությունների մեջ այնպիսի հանցագործության նշաններ են յերեան դալիս, վոր յենթակա չեն Արտադրական—ընկերական դատարանի իրավասության, ամբողջ գործը հանձնըլում են ժողովրդական դատարանի քննության:

Դ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ—ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱԿԱՆ ԿԱՐԳԸ

26. Արտադրական—ընկերական դատարանի վորոշումների այն մասը, վորը վերաբերում է դրամական գործերի գանձմանը, յեթե ինքնահօժար կերպով չի կատարվի, ապա այդ գանձումները կատարում են ձեռնարկության կամ հիմնարկության վարչությունը:

Իսկ յեթե պատասխանողի ձեռնարկությունից կամ հիմնարկությունից հեռանալու պատճառով վարչությունը հնարավորություն չի ունենալ պահելու քաղաքացիական հայցի առթիվ վորոշված գումարը կամ տուգանքը, այդ դեպքում Արտադրական—ընկերական դատարանը տալիս են իր վորոշման պատճենը կա-

տարման մակագրությամբ, վորն ունի կատարողական թերթի ուժ։ Նման դեպքերում վորոշումը կատարում է դատական կատարածուն կամ Գյուղխորհուրդ՝ համաձայն դատական վճիռների կատարման մասին գոյություն ունեցող բնդհանուր կանոնների։

27. Տուգաննելով արարքը գործողին կամ պարտավորացնելով նրան հատուցելու պատճառած վնասը, Արտադրական—ընկերական դատարանն իրավունք ունի մուծվելիք գործարների համար մի քանի նվազ սահմանել։ Նույն իրավունքն ունի դատարանը և գույքային ու դրամական վեճերի առթիվ հայցեր քըննելիս։

28. Յեթե Արտադրական—ընկերական դատարանը գործը քննել է և հարց է հարուցել վարչության առաջ աշխատանքից հեռացնելու մասին, ապա այդ վորոշման ընդունելուց վոչ ուշ, քան 3 որվա ընթացքում վարչությունը պարտավոր է լուծել հարցը և հետեւանքի մասին հայտնել Արտադրական—ընկերական դատարանի նախագահին։ Արտադրական—ընկերական դատարանի առաջարկը մերժելու դեպում վարչությունը պետք է նշի և մերժման պատճառները։

Նույնը պարտավոր է կատարել և պրոֆեկտմակերպությունը, վորի առաջ Արտադրական—ընկերական դատարանը հարց է հարուցել արարքը գործողին պրոֆմիությունից հեռացնելու մասին։

29. Յեթե վարչությունը մերժի Արտադրական—ընկերական դատարանի աշխատանքից հեռացնելու մասին հարուցված հարցը և կամ աշխատողի նկատմամբ այլ միջոց կործադրի, կամ ել բոլորովին ազատի տույժից, ապա Արտադրական—ընկերական դատարանի նախագահն այդ մասին հայտնում է գործարտեղկոմին, վերջինը յեթե գտնում է, վոր տըվյալ գործի նկատմամբ վարչության վերցրած գիծը սխալ է, պարտավոր է այդ մասին հայտնել պրոֆմիութենական վերադաս կազմակերպությանը։

Յեթե գործարտեղկոմն անհետեանք թողնի Արտադրական—ընկերական դատարանի պրոֆմիության շարքերից հեռացնելու վերաբերյալ վորոշումը, ապա Արտադրական—ընկերական դատարանի նախագահը կարող է հարց հարուցել պրոֆմիութենական վերադաս կազմակերպության առաջ գործարտեղկոմի փորոշումը վերացնելու մասին։

8. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՎՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

30. Արտադրական—ընկերական դատարանների վորոշումները վերջնական են, անմիջապես ի կատար են ածվում և կարող են բողոքարկվել միայն հսկողության կարգով ժող. դատարանի կողմից։

31. Արտադրական—ընկերական դատա-

րանների գործունեյթյան վրա հսկելու և
նրանց վորոշումները փոխելու իրավունքը ար-
տադրական բնույթ ունեցող կենցաղային գոր-
ծերի նկատմամբ պատկանում է համապա-
տասխան ըջանի ժողովատարանին:

32. Յերբ շահագրգոված անձանց բողոքնե-
րից կամ իր ունեցած տեղեկություններից, այլ
և Արտադրական—ընկերական դատարանի
գործունեյությունը հետազոտելու ժամանակ
ժողովատարանը հայտարերում է, վոր Արտա-
դրական—ընկերական դատարանը վորոշում և
հանել իրեն վոչ յենթակա գործի առթիվ կամ
թե գործը լուծել ե եյալես խախտելով որեն-
քը, այդ գեպքում ժողովատարանը պարտավոր ե
զադարեցնել Արտադրական— ընկերական դա-
տարանի վորոշման կատարումը կամ ել կարճել
գործը, յեթե դրա համար կա բավարար հիմք,
կամ բեկանում ե վորոշումը, ընդունելով այն
ի քննություն, կամ ուղարկում ե նույն ար-
տադրական ընկերական դատարանին տարրեր
կազմով վերըստին քննելու համար:

33. Յեթե վարչությունը հեռացը ել ե աշ-
խատողին, վորի նկատմամբ Արտադրական—
ընկերական դատարանն ել վորոշել ե աշխա-
տանքից հեռացնել, ապա հեռացվածն իրա-
վումք ունի վարչության կողմից հեռացման
մասին իրեն հայտնելու պահից 14 որվա ըն-
թացքում համապատասխան հայց հարուցել

ժողովատարանում, յեթե իրեն հեռացնելը սիս-
է համարում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Նման հեռացման վե-
րաբերաբ բողոքը չի կարող քննվել ԳԿՀ-ում:

34. Յեթե Արտադրական—ընկերական դա-
տարանը հարց է հարուցում պրոֆմիութենա-
կան մարմինների առաջ՝ պրոֆմիության շար-
քերից հեռացնելու մասին, ապա այդ վերջին-
ների վորոշումների դեմ բողոքներ տրվում են
վերադաս պրոֆորդաններին:

9. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ՇԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՑԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

35. Արտադրական—ընկերական դատարա-
նը չպետք է գործերն ընդունի արտադրական
այնպիսի խախտումների մասին, վորոնց հա-
մար վարչությունը բանվորին, ծառայողին
կամ կոլտնտեսականին արգեն տույժի յեն-
թարկել ե, բացառությամբ հատուկ հասարա-
կական նշանակություն ունեցող դեպքերից:

36. Նմանապես, յեթե վարչությունն ար-
տադրական խախտման մասին գործն իր նախո-
ձեռնությամբ է հանձնում արտադրական ըն-
կերական դատարանի քննության, կամ համա-
ձայնվում ե, վոր հասարակական կազմակեր-
պությունների կամ ձեռնարկությունների և
հիմնարկությունների բանվորների ու ծառա-
յողների նախաձեռնությամբ հարուցված դոր-
ծը քննի այդ նույն դատարանը, ապա նա զրկ-

վում ե այլ արարքի համար ինքնուրույնարար տույժի յենթարկելու իրավունքից :

37. Յեթե Արտադրական—ընկերական դատարանը քննում է արտադրական արարքի վերաբերյալ գործը և վորոշում է հարց հարուցել վարչության առաջ զանցառությն աշխատանքից հեռացնելու մասին, ապա վարչությունը, յեթե հիմք ունի, կարող է արարք գործողին և ավելի մեղմ տույժի յենթարկել:

Իսկ յեթե Արտադրական—ընկերական դատարանն իր վորոշման մեջ կիրառել ե որենքով իրեն վերապահված ներգործության մի այլ միջոց (նախազգուշացում, հասարակական պարսպանք և այլն), ապա նույն գործով վարչությունը տույժ սահմանել չի կարող :

10 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՅԵՎ ԹՐՈՒՄԵՐԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

38. Գործար-տեղկոմները և ցեխային կոմիտեները պարտավոր են մշտական զաղափարական—քաղաքական ղեկավարություն և վերհսկողություն ունենալ Արտադրական—ընկերական դատարանների գործունեյության նկատմամբ ամենորյա ոժանդակություն ցույց տալ նրանց աշխատանքի ընթացքում, մասնավորապես վոչ ուշ, քան 3 ամիս մեկ անգամ շեղ նրանց հաշվետու զեկուցումները գործարտեղկոմների պլենումներում, նրանց սիստեմատիկ հրահանգումն այն բոլոր հարցերի մասին,

վորոնք կարող են ծագել նրանց աշխատանքի շուրջը՝ համապատասխան շենքեր հատկացնել, լայն հայտարարել Արտադրական—ընկերական դատարանների նիստերի, տեղի և ժամանակի մասին, պնդել վարչության առաջ, վորպեսզի Արտադրական—ընկերական դատարանների քննությանը հանձնվեն այն բոլոր գործերը, վորոնք դասակարգային—քաղաքական նշանակություն ունեն: Աջակցել Արտադրական—ընկերական դատարանի աշխատանքը ցեխային և համագործարանային թերթում սիստեմատիկորեն լուսաբանելու գործին և այլն:

ՀԱՄԽ-ի քարտուղար՝ ԽՈՉԱՄԻՐՅԱՆ
Գերագույն դատարանի նախագահի տեղակալ՝
ԳԹԼԻԿՅԱՆ

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՑԵՎ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Բնակարանային կոռուպտիվ ընկերություններին, պետական յեղ
ժաղաքայնացված տնօւին տարբեր ընկերական դատարաններ
կազմակերպելու մասին.—

1932 թ. մայիսի 13-ին

Պետական, քաղաքայնացված և կոռոպերա-
տիվ տները տնտեսաբար ոգտագործելու, նաև
բնակարանային կոնֆլիկտների արագ լուծումն
ապահովելու և հին կենցաղի մնացորդների
(փիրագորանք, սրիկայություն, գողություն և
այլն) գեմ պայքարի շուրջը հասարակական
լայն մասսաների ինքնագործունեյությունը
կենտրոնացնելու նպատակով կենտրոնական
Դորժադիր կոմիտեն և ժողովրդական կոմի-
սարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ են՝

1. Բնակարանային-վարձակալական և
բնակարանային-շինարարական ընկերություն-
ներին, նաև պետական ու հասարակական կազ-
մակերպություններին և քաղաքային խոր-
հուրդներին պատկանող տներին առնելու կազ-
մակերպել ընկերական դատարաններ:

2. Ընկերական դատարանները կազմա-

կերպվում են բնակակողմիությունների և պե-
տական ու քաղաքայնացված այն տներում,
վորտեղ բնակվում են վոչ պակաս, քան 25 մե-
ծահասակներ:

3. Ընկերական դատարաններն ընտրում
են բնակարանային կոռոպերատիվ ընկերություն
ներ կամ պետական ու քաղաքայնացված աների
ընտրական իրավունք ունեցող բնակիչներ ընդ-
հանուր ժողովներում մի տարի ժամանակով
հետեւյալ կազմով, նախագահ, տեղակալ, օ-ից
վոչ ավելի ատենականներ.

Բնակուալմիության վարչության անդամ-
ները և տնային վարչության ներկայացուցիչ-
ները չեն կարող ընտրվել ընկերական դատարա-
նի անդամներ:

4. Ընկերական դատարանները քննում են
հետեւյալ գործերը.

ա) բնակիչների իրար նկատմամբ, նաև ի-
րենց բոնած տարածության նկատմամբ ցու-
ցարերած անսանտեսավար վերաբերմունքը (ջե-
ռուցման և վաճանայի փչացումը, բնակարանում
սպիտակեղեն չորացնելը և այլն).

բ) միջանցքը բնակելի սենյակ դարձնելը.

գ) ընդհանուր ոգտագործության տակ
դատնվող տարածությունները (խոհանոց, մի-
ջանցքներ, լողարան և այլն) բնակարան դարձ-
նելը.

դ) բնակարանային հարմարությունների
(մարագներ, նկուղներ, չարդախներ և այլն),

ինչպես նաև բակի և այլու ոգտագործման կարգի խախտումները.

յե) ընակարանների ներքին կարգապահության խախտումները (արտաքին մուտքերի բացումն ու փակումը. մաքրելու կարգի, գեշերվա. հանդստի ժամերի խախտումը և այլն).

զ) ընդհանուր ոգտագործության տեղերում կենդանիներ պահելը.

ե) ընդհանուր ոգտագործության տեղեր զբաղեցնող անձանց իրենց նախկին տեղը տեղափոխելը.

ը) կոմունալ ծառայությունների և լույսի վճարի բաշխման վերաբերյալ հարցերը.

թ) այն վեճերը, վոր վերաբերում են բնակարաններում վառարաններ վառելու ու դրա հետ կապված ծախքերի բաշխման վերաբերյալ վեճերը.

ժ) այն վեճերը, վոր վերաբերում են ընդհանուր ոգտագործության տեղերի վերանորոգումների ծախքերը բնակիչների միջև բաշխելուն.

ի) 50 ոռություց վոչ ավելի քաղաքացիական հայցերը, վորոնք ծագել են բնակչիներով տների բնակիչների միջև, բացառությամբ բնակարանի վարձի (Հոդ. 6 կետ. «ա»), ալիմենտի և աշխատավարձի հարցերից.

լ) խոսքով, գրավոր կամ գործողությամբ հասցրած վիրավորանքը, վարկարեկող սուտ

տեղեկություններ տարածելը և առանց մարմնական վնասվածքներ հասցնելու ձեծը.

լլ) 50 ոռություն արժեքից վոչ բարձր գողությունը, վորը կատարվել ե բնակարաններում առաջին անգամ և առանց տեխնիկական միջոցներ գործադրելու.

ծ) սրիկայության այնպեսպես, վորոնք յենթակա չեն քրեական հետապնդման, կամ կենցաղային այլ արարքները, վորոնք չեն համապատասխանում հասարակական կուլտուրավահանջներին.

կ) ինքնիրավությունը, յեթե կատարված է առաջին անգամն ու հասցրած վնասը 50 ոռություց ավելի չե.

5. Ընկերական դատարանները՝ քննում են 4-րդ հոդվածում հիշված գործերը.

ա) յերբ կողմ են հանդիսանում այն աների քաղաքացիները, վորտեղ կազմակերպված են ընկերական դատարանները.

բ) յերբ կողմ են հանդիսանում մի թաղամասի կամ քաղաքի սահմաններում յեղած տարբեր բնակարանային միավորությունների մեջ ապրող քաղաքացիները, այդ դեպքում գործը քննում ե այն դատարանը, վորտեղ ապրում ե պատասխանողը կամ հանցանք կատարողը.

6. Ընկերական դատարանների քննություններին յենթակա չեն.

ա) յեթե բնակարանի վարձի մասին վեճ ե առաջանում՝ բնակվողների ու տնային վարչության միջև.

բ) յերբ կատարված հանցանքի մեջ կանայլ հանցանքի նշավակներ կամ յերբ այդ հանցանքների համար պահանջվում է կիրառել ավելի խիստ միջոցներ, քան այն, ինչ վերապահված է ընկերական գատարաններին:

Հեշտական կարգի գործերը յենթակա յենտողատարանի քննությանը ընդհանուր հիմունքներով:

7. Ընկերական գատարանում գործերը կարող են հարուցվել շահագրգուված անձնոց կամ հասարակական կազմակերպությունների թերանվոր և թե գրավոր դիմումների հիման վրա:

Բանավոր դիմունները գատարանի նախագահը կամ անդամը շարադրում և արձանագրության մեջ, վորը կարգացվում և դիմողին և ստորագրվում ե դիմողի կողմից:

8. Ընկերական գատարաններն իրենց աշխատանքներում կաշկանդված չեն գատավարական ձևական կանոններով, բացի այն կանոններից, վորոնք հիշված են այս վորոշման մեջ. Ընկերական գատարանում գատավարությունն ազատ ե ամեն տեսակի գրամական և այլ տեսակի գանձումներից:

Ընկերական գատարանի գրասենյակային տեխնիկական սպասարկությունը (թուղթ, բնակարան, ծանուցագիրը կողմերին հանձնելը և այլն) կատարվում է տնային վարչության ազարատի կողմից, նրա միջոցներով:

9. Գործերը քննության են առնվազամ ընկերական դատարանների գոնքաց նիստում, նախագահի կամ նրա տեղակալի և դատարանի յերկու անդամի մասնակցությամբ՝ ըստ հերթականության: Ընկերական դատարանում գործերը պետք ե քննության առնվեն դիմումն ստանալու պահից 5 օրվա ընթացքում.

10. Ընկերական դատարանի ամբողջ կազմի կամ նրա առանձին անդամների դեմ կողմերը կարող են բացարկ հայտնել և պահանջել, վոր նրանք գործի քննությանը չմասնակցեն: Բացարկը կարելի յե հայտնել այն դեպքում, յերբ ընկերական դատարանի անդամներից մեկըն ու մեկը կողմերի հետ առանձին հարաբերության մեջ է դատավում կամ շահագրգուված ե դործերի ընթացքով:

Դատարանի անդամների դեմ հայտնված բացարկի հիմնավորված լինելը վորոշում են նույն ընկերական դատարանի մնացած անդամները, վորոնց դեմ բացարկ չի հայտնված: Յեթե բացարկի պատճառները հարգելի յեն համարվում, ապա ընկերական դատարանը չհետաձգելով գործը, հրավիրում ե նիստին մասնակցելու ընկերական դատարանի մի ուրիշ գամեմին:

11. Ընկերական դատարանը պարտավոր է գործը քննելիս հրավիրել բողոքատուին, պատասխանողին կամ հանցանք կատարողին, լիւ նրանց բացատրությունները, անհրաժեշտու-

թյան դեպքում հարցաքննել վկաններին, կատարել տեղական զննություն և ձեռք առնել բոլոր միջոցները՝ գործն ավելի լրիվ և բարձակողմանի պարզելու համար:

Յեթե գործին մասնակցող անձինք, տեղեկություն ստանալով, դատարան չեն ներկայանում, գործի քննությունը կարող է կամ հետաձգվել չներկայացող անձանց կանչելու համար, կամ քննվել նրանց բացակայությամբ, կամ թե կարճվել:

12. Բնկերական դատարանի վորոշումներ ընդունվում են դատարանի կազմի ձայների պարզ մեծամասնությամբ, շարադրվում են կարծությունների և հրապարակով հայտնվում են գործի մասնակցողներին:

13. Բնկերական դատարանները կարող են կիրառել հետեւյալ ներդորձական միջոցները՝
ա) նախագդուշացում.

բ) հասարակական պարսավանք, հրապարակելով կամ չհրապարակելով այն՝ տնային պատի կամ կենտրոնական թերթերում.

գ) 10 ոռորդուց վոչ ավելի տուգանք՝ հոգուտ հասարակական կազմակերպությունների (Գաջը-Ավիաքիմ, «Մանուկներ-Բարեկամ» ընկերություն)։

դ) դույքային վնասը հատուցելու պարտավորություն, յեթե այդ 20 ոռորդուց ավելի չե:

14. Բնկերական դատարանների վորոշում-

ները վերջնական են, յենթակա չեն բողոքարկման և կատարվում են անմիջապես:

15. Բնկերական դատարանի վորոշումները կամովին չկատարելու դեպքում վորոշումն ի կատար և ածվում դատական կատարածուի միջոցով։

16. Բնկերական դատարանների վորոշումները, վորոնցով կողմերի վրա պարտականություն է դրվում մյուս կողմերին խոչընդունակությամբ ի բնականալ բնակարանն ողտագործելու, ինչպես նաև այն վորոշումները, վորոնց չի կարելի հարկադրաբար ի կատար ածել (վորոշ գործողությունների յերկարատև կատարումը, որինակ բնակարանը մաքուր դրության մեջ պահելու, վորոշ չենքեր լուսավորելու և այլն), ի կատար են ածվում կողմերի կողմից. չկատարելու դեպքում համապատասխան վորոշումները կարող են հիմք ծառայել բնակարանային դատարանին դիմելու համար։

17. Ժողովրդական դատավորն անձամբ կամ դատախազի բողոքի հիման վրա ընկերական դատարանում հայտաբերելով այդ դատարանին վոչ-ընդդատյա գործեր, կամ ընկերական վորոշման մեջ նկատելով նրա իրավասությունից զուրս դալու դեպքեր, կամ թե որենքի եյական խախտում, կասեցնում և այդ վորոշման կատարումը, ընդունելով այն ի քննություն, կամ ուղարկում ենուն ընկերական դատարանին՝ տարբեր կազմով միաժամկետ համար։

ՀՀ ՌԱԴՆԱՐԴԱՐԱԿԱՆ
ՀԱՅՈ-ԱՐՄ ՀՀ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

34-И
Са 534

18. Քնկերական դատարանների ընդհանուր
ղեկավարությունը՝ ՀՍԽՀ տերիտորիայի փրա
իրականացնում և ՀՍԽՀ Գերագույն դատարա-
նը, իսկ անմիջական հրահանգումն ու հսկողու-
թյունը՝ համապատասխան ժողովադարանը:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահի տեղակալ՝ Ա. ԴԱՇՏՈՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահի տեղակալ՝ Ն. ԿՈՒՐՍԵԼ

Ի. առ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղար՝ Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

У С Т А В

Производственно-товарищеских
судов

Изд. Эрпарткома, Эревань, 1933

ՀՀ Ազգային գրադարան



NL0199229

